



## 229. ԳԱՌԱՍՈՒՆ ԸՆԿԵՐՈՒՄ

Մին հետի Մելիք Զհանգիրը կանչիլ ա տվալ ուրան մհալան քռասում հըրթնատերը պառավ կնեկ, դունուղատանը ջարգին նըստցնիլ ա տվալ, ասալ թող դրուց անեն, մինչև լոխումքը կը հըվագլեն:

Հենց վեր խարանը տարան թա քռասում կնանիքը եկալ են հեն ծլրպատակ նստոտած, Մելիք Զհանգիրը էն զալին բեղերը հլուրիլավ նի մտավ դունուղատոն, լոխումքին պարիօր ասեց, համել աշկին տակավը մուշտամբ աշկավ լոխումքին տնդրդեց:

Քռասում կնանիքը մին-մինի ենդա, աստըծու պարին, աստըծու պարին ըսեցին: Մելիքը հրցրուց.

—Տուք գյուղում ե՞ք, թա ծեզ հինչի հետի եմ կանչա՞լ: Ընդըրանք էլ թա.

—Եսեղա՞ն ենք գյուղում, տու կանչալ ես աղա-Մելիք, մենք էլ եկալ ենք:

—Դե վեր գյուղում չեք, ես ասեմ, ես կանչալ եմ էն կնանունցը, վերունք ուրանց հրթներին նհետ սերավ են, ջան են ասում, ջան լսում, ուրուր ըրևավ ուրթում օտում, հուվեր ծղանա ուրան հարթնին նհետ բարիշ լի, սաղ օրը կռեվ են անում ուրուր մես օտում, յա էլ խռով են ուրուր անա, թող երկենան քյնան ուրանց տները:

Մելիքին էս խռովին յրան, էտ կնանիքը մին-մինի ենդա, աըդպներան եր կցան տուն տառուն քյնացին, մեաց մինակ մին պառավ կնեկ ուրան տեղը նստած:

Մելիքը տեսավ, վեր քռասում կնանոցան մինը նա մնացալ, մոստացավ ընդդան հրցըրուց.

— Շարմաղ աքե՞ր, մին ասի տեսնամ, էտ քու հարթնա հիշ-  
քան լավըն ա, վեր ընդրան նհետ սերավ ես կենում, զբլմըզալ չեք  
անում, հերհեր մես չեք օտում:

— Աղա—Մելիք, էտ հուզա՞ ասալ քեզ, վեր ես հարթնիս նհետ  
սերավ եմ, ես քե մատաղ, բոլիտ դուդրան, մին ասի տեսնամ, կե-  
ծակը ընդրա շիզյարան կենա, գյանլիկորավ ինի, յա էլ աշկերը  
եր տառնա վենդին տակը տառնա, բուռանա, տափերը տփտըփի-  
լավ ման կյա, ես տեսնամ ասուծ ընդրան քոս տա, դենգեր շի  
տա, վեր ջանը քորի, ընդրա գյանդանը կոտրի, ումբուրը թաղեմ,  
խոզզնըհատ ինի, բա ես ընդրա նհետ սերավ ե՞մ, վեր ասում ես,  
տվալ ա օմբաս կոտրալ, կարում շեմ, թա տեղաս տուրծնը կյամ,  
թաշնա լոխնան կանուխ ես կը քանի ըստեղան, բա ես հարթնիս  
նհետ սերա՞վ եմ, վել ինի ընդըհենց հարթնը:

Մելիք ԶՀանգիրը էս վեր լսեց, ծափ տվավ էրկու գյանդան կան-  
չեց, թափշուր ըրավ, վեր Շարմաղ աքուրը կոնըտկերան փռնեն  
տանեն հերանց տոն:

Հթըհենց էլ ըրին:

